# ՊԱՐՈՆ ԼՈՒՅՍ ԿԱՖԱՑԻ

† ՌԺԶ = 15 մայիսի 1567, Եշ.

Ազգությամբ թուրք Սուլեյման Սուլթանի օրոք, որ նստում էր Կոստանդնուպոլիս քաղաքում եւ տիրում շատ երկրների, ազգերի ու ցեղերի [վրա], մի բարի երիտասարդ հայտնվեց Պարոն Լույս անունով՝ Հոնաց աշխարհից, Կաֆա քաղաքից, ազգությամբ հայ, հավատով քրիստոնյա, Սուրբ Գրիգոր Լուսավորչին դավանակից, բարի ծնողների զավակ, հոր անունը Աստվածատուր: Ջմռան ընթացքում անուշահոտ վարդ երեւաց աշխարհի մեջ, ինչպես հուր վառվեց Քրիստոսի սիրո համար, Հայոց ՌԺԶ. թվականի հունվարի հինգին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայտնության ճրագալույցի օրը:

Անօրենները հանկարծակի շրջապատեցին նրան եւ բռնեցին Սուրբ նահատակ Պարոն Լույսին, որ տասնութ տարեկան էր, երիտասարդ, գեղեցկատես, վայելուչ հասակով, ճարտար լեզվով, աստվածային շնորհներով զարդարված: Այլազգիները շրջապատեցին նրան եւ ասացին. «Դու տաճկացել ես Կեզլով քաղաքում. եւ գալով այստեղ՝ պաշտում ես քրիստոնեական հավատքը»:

Այդ ժամանակ Պարոն Լույսը լցվեց Սուրբ Հոգով, հոգով հանեց եւ հառաչելով նայեց դեպի վեր՝ երկինք. եւ սրտում հիշեց կենդանի Քրիստոսին եւ անսասան ու մեծ հավատքով ապավինեց մեր Սուրբ Հայր Գրիգոր Լուսավորչի աղոթքին, պատասխանեց նրանց. «Ես հավատով քրիստոնյա եմ եւ հավատում եմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. հավատում եմ նաեւ Քրիստոս Աստծուն. տաճիկ չեմ եղել եւ ոչ էլ կլինեմ»:

Անօրենները հավաքվելով հարձակվեցին եւ բռնելով նրան՝ տարան դատավորի մոտ: Եւ մինչ տանում էին սուրբ նահատակին, բարձր ձայնով աղաղակում էին ինչպես դիվահար, բողոքում՝ ըստ իրենց օրենքի: Եւ երբ հասան դատավորի ատյանը, բերեցին սուտ վկաների, որոնք դատավորին ասացին. «Մենք վկա ենք, որ այս երիտասարդը տաճիկ է եղել »:

Դատավորը Սուրբ Պարոն Լույսին հարցրեց եւ ասաց. «Քո մասին այսպես են ասում, թե տաճիկ ես եղել, ինչո՞ւ ես ուրանում մեր օրենքը եւ հավատում քրիստոնյաների օրենքին. մենք մուսուլման ենք, մեր խոսքը ճշմարիտ է, թագավորությունը մերն է, եկ եւ լսիր մեզ եւ ընդունի՛ր մեր օրենքը, շատ բարիքների կհասնես. եւ եթե չլսես մեզ, բազում չարչարանքներ կկրես կա՛մ հրով կայրենք, կա՛մ էլ սրով կսպանենք. բայց խնայում ենք քո երիտասարդությունը»:

Այդ ժամանակ սուրբ նահատակի երեսը պայծառացավ եւ Սուրբ Հոգով զորացավ. բացեց բերանը, պատասխանեց դատավորին եւ ամենքին, որ ատյանում էին. «Ես քրիստոնյա եմ եւ Քրիստոսի ծառա ու քրիստոնյա ծնողների զավակ. ես չեմ ուրանա Քրիստոսի հավատը եւ չեմ ընդունի ձեր օրենքը. ինչպես կամենում եք, այնպես էլ վարվեք, ես Քրիստոս Աստծուն չեմ ուրանա»:

Իմանալով ամբոխի եւ սուտ վկաների չարությունը՝ դատավորը չհավատաց նրանց: Այն ժամանակ քրիստոնյաներին ընդառաջեց. կային երաշխավորներ, որոնք վերցնելով նրան՝ տարան իր ծնողների տուն: Անօրենները, խորհրդակցելով, գնացին իրենց մուֆտայի մոտ եւ ասացին. «Հայոց ազգից մի երիտասարդ ընդունել է մեր օրենքները եւ տաճիկ դարձել, որի համար ունենք վկաներ. մենք նրան տարանք դատավորի մոտ եւ վկայեցինք, որ Կիզլով քաղաքի այս երիտասարդը տաճիկ էր եւ այստեղ գալով՝ շրջում է որպես քրիստոնյա. դատավորն արդար դատավճիռ չկայացրեց եւ նրան չհանձնեց մեզ, այլ կրկին ազատ արձակեց: Մենք, մխիթարություն չգտնելով, դիմեցինք քեզ. եւ հիմա աղաչում եւ խնդրում ենք քեզ՝ մեզ քրիստոնյաների մոտ ամոթով մի՛ թող, այլ տո՛ւր մեզ քո հրամանի նամակը՝ ինչպես կարգադրում է մեր օրենքը»:

Նա մի նամակ գրեց դատավորին. «Պարտավոր եք նրան դարձի բերել. եւ եթե դարձի չգա, պետք է սրով գլխատել»:

Եւ նրանք վերցնելով նամակը՝ տարան դատավորին եւ տեղեկացրին նրան. եւ դատավորից հրաման ստանալով, գնացին Սուրբի ծնողների տուն, եւ փնտրում էին նրան, իսկ ծնողները ցանկանում էին թաքցնել նրան: Սակայն Սուրբ երիտասարդը գիտակցելով՝ չցանկացավ թաքնվել, այլ իսկույն ձայն տվեց կանչողներին. «Այստեղ եմ»: Բռնելով երանելի երիտասարդին՝ տարան դատավորի մոտ. եւ դատավորը բազմիցս հարցաքննելով սուրբին՝ չկարողացավ նրան շեղել Քրիստոսի հավատից:

Այդ ժամանակ վճռեց՝ եթե չընդունի մեր օրենքը, մահվան դատապարտել: Եւ երանելի երիտասարդին հանձնեց նրանց ձեռքը. եւ նրանք, ձայն տալով իրար, հավաքվեցին: Երանելուն շրջապատելով՝ հալածում էին նրան եւ խոշտանգում, գլխին էին հարվածում, թքում էին երեսին ու ապտակում, եւ նա նրանց մեջ էր՝ ինչպես գառը գայլերի մեջ:

Ապա տարան մուֆտիի (հոգեւոր առաջնորդ) մոտ. նա կանչեց Սուրբ երիտասարդին, հորդորներով խրատեց նրան ու խոստացավ բազում պարգեւներ եւ փառք, բայց չկարողացավ նրան սասանել եւ հեռացնել Քրիստոսի սիրուց: Ապա սպառնաց նրան զանազան տանջանքներով, բայց կրկին չկարողացավ նրան վախեցնել. քանի որ Սուրբ Հոգին բնակվում էր նրա մեջ եւ զորացնում էր, զվարթ եւ պայծառ դեմքով անահ ու աներկյուղ պատասխան էր տալիս նրանց յուրաքանչյուր հարցին: Դանիշմանն իր մոտ կանչեց Սուրբ Պարոն Լույսին եւ ասաց. «Արի՛, դարձի՛ր դեպի մեր օրենքը, քեզ կորդեգրեմ -, բազում պարգեւներով կմեծարեմ եւ քեզ միշտ կհիշենք մեր ուրբաթ օրվա աղոթքում»:

Սուրբ Պարոն Լույսն ասաց. «Ես քրիստոնյա եմ եւ քրիստոնյա ծնողների զավակ, ձեր օրենքը չեմ ընդունում»:

Ամբարիշտը, բարկանալով ապտակեց Սուրբի այտին, իսկ նա խնդությամբ մոտեցնելով մյուս այտը՝ ասաց. «Հարվածի՛ր իմ մյուս այտին երեք անգամ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրամանի համաձայն. «Եթե մեկը ապտակում է այտիդ, մյուսն էլ մոտեցրու» (հմմտ. Մատթ. Ե. 39):

Երբ չկարողացան հաղթել նրան եւ հեռացնել Քրիստոսի սիրուց, տարան պարոն

Սանճախի մոտ: Պարոնը շատ ջանաց աղերսելով եւ պարգեւներ խոստանալով համոզել նրան, սակայն չկարողացավ. բարկությամբ սպառնաց նրան, սակայն Քրիստոսի սիրուց չկարողացավ հեռացնել: Ապա նրան հանձնեց դահճապետին, որը տարավ բանտ, երեք օր ոտքերը կոճղի մեջ կարծրացրին: Երեք օր հետո նրան կրկին տարան բռնավորների ատյան եւ համոզիչ շատ խրատներ տվեցին նրան. «Հեռացի՛ր քրիստոնեությունից եւ հավատա՛ մեր օրենքներին»: Նա բացարձակ չէր լսում նրանց, այլ հաստատուն եւ աններեր էր մնում Քրիստոսի հավատքի մեջ: Դարձյալ հրամայեցին տանել բանտ, եւ շատ անգամ հավաքվում էին բոլոր այլադավանները, ինչպես կատաղի գազան հարձակվում նրա վրա: Ոմանք հորդորում էին, ոմանք ձեռնակոծում, ոմանք գլխին էին հարվածում, իսկ մյուսները թքում էին երեսին: Միմյանց վրա գոռհելով՝ բարձր ձայնով աղաղակում էին՝ ըստ իրենց օրենքի, սակայն ամենեւին չկարողացան սասանել Քրիստոսի երանելի նոր նահատակին:

Իշխանի հրամանով դահճապետը բռնությամբ դուրս բերեց եւ խլեց նրանց ձեռքից, տարավ բանտ: Բազմաթիվ քրիստոնյաներ, քահանաներ, ժողովուրդներ եւ հասակակից պատանիներ գնում էին երանելի երիտասարդ Պարոն Լույսի մոտ եւ մշտապես քաջալերում էին նրան: Եւ նա զվարթ սրտով, պայծառ դեմքով եւ ամուր հավատքով պատասխանեց ամենքին. «Ինձ համար հոգ մի՛ արեք, ես պատրաստ եմ մեռնել Քրիստոսի սիրո համար, բնավ չեմ երկնչում նրանցից եւ չեմ ուզում նրանց պարգեւները, եթե սրով կտրեն գլուխս կամ կրակով այրեն մարմինս, ես պատրաստ եմ Քրիստոսի սիրո համար: Բայց եթե դուք կարող եք դրամով կամ աղաչանքով ազատել ինձ նրանց ձեռքից, բարի, ապա թե ոչ՝ պատրաստ եմ մեռնելու եւ դուք աղոթքներում չմոռանաք ինձ»: Բայց Տիրոջ տաճարում քահանաները եւ մարդիկ անդադար եւ մշտապես աղոթում էին նրա՝ Քրիստոսի սուրբ վկայի համբերության համար:

Իսկ այլադավանները մշտապես գնում էին բանտ եւ խրատում էին նրան, հորդորում էին զանազան խոսքերով, ահաբեկում էին նրան, բայց չէին կարողանում խաբել Քրիստոսի սիրելիին: Հունվարի հինգից մինչեւ մայիսի 15-ը, մշտապես հալածում նրան, չարչարում բանտում՝ կապանքներով եւ տարբեր կտտանքներով, սակայն չկարողացան համոզել: Սուրբ երիտասարդ Պարոն Լույսը կրկին ու կրկին զորանում էր Սուրբ Հոգով եւ հաստատուն էր Քրիստոսի հավատի մեջ:

Տեսիլքում նրան երեւաց մեր Սուրբ Հայր Գրիգոր Լուսավորիչը եւ քաջալերելով մխիթարեց նրան եւ ասաց. «Հաստատուն եւ ամո՛ւր եղիր Քրիստոսի սիրո մեջ եւ բացարձակապես մի՛ երկնչիր նրանց սպառնալիքներից, քանի որ Քրիստոս Աստված միշտ մեզ հետ է»: Եւ Աստծո հրեշտակները մանուկների նման հայտնվում եւ քաջալերում էին նրան բանտում: Հետո Մեր Տեր Հիսուս Քրիստոսը հրեշտակների զորքով երկնքից իջնում էր բանտ եւ զորացնում իր ծառային՝ Սուրբ Պարոն Լույսին: Ծնողները շատ վշտացան եւ բազմիցս փորձեցին, բայց չկարողացան ո՛չ աղերսանքներով, ո՛չ էլ կաշառքով ազատել այլադավանների ձեռքից: Դարձյալ նավով գնացին Կոստանդնուպոլիս եւ տեղեկացրին

թագավորին. վերցնելով թագավորի նամակը՝ վերադարձան Կաֆա: Տանելով նամակը՝ հանձնեցին բռնավորներին: Նրանք, բարկությամբ լցվելով, որոշեցին կա՛մ դարձի բերել, կա՛մ սպանել:

Այլազգիները հավաքվեցին, գնացին դատավորի ատյան և ասացին նրան. «Մեզ հանձնի՛ր երիտասարդ Պարոն Լույսին՝ կա՛մ դարձի կբերենք, կա՛մ կսպանենք, որպեսզի քրիստոնյաներից ոչ մի նախատինք չլինի, քանի որ սաստիկ նախատինք է մեզ, որ երիտասարդ մի քրիստոնյա հաղթի մեզ ամենքիս»:

Այդ ժամանակ դատավորը հրամայեց գնալ ու հանել նրան բանտից և բերել իր մոտ. և նրան հանեցին բանտից և հարց ու փորձ անելով՝ համոզվեցին, որ նրա հավատը Քրիստոսի հանդեպ անսասան է և հաստատուն: Դատավորը գլխատման վճիռ կայացրեց, եթե չդառնա դեպի Մուհամեդի օրենքը: Եվ դահճապետը բռնելով երիտասարդին՝ կապեց և պարան քաղաքի իշխանի մոտ: Իշխանը շատ ջանք գործադրեց՝ խրատելով ու վախեցնելով. վերցնելով 500 կարմիր դահեկան՝ դրեց նրա առաջ և ասաց. «Միայն խոսքով ասա, որ հավատում ես մեր օրենքներին և փրկվիր մահվանից, ու հետո ծածուկ պահի՛ր քո հավատը, քանի որ երիտասարդ ես, խնայի՛ր քեզ»:

Սուրբ երիտասարդ Պարոն Լույսը պատասխանեց. «Ես պատրաստ եմ մեռնելու Քրիստոսի անվան համար»: Երբ իշխանը տեսավ որ դարձի չի գալիս, հրամայեց գլխատել նրան: Եվ նրան տարան գլխատման վայրը, իսկ Սուրբ երիտասարդը ուրախությամբ էր գնում մահապատժի կատարումը: Աստծու հրեշտակների բանակները շրջապատեցին, և մեր Տեր Հիսուս Քրիստոս հայտնապես գնում էր նրա առջևից և ցույց էր տալիս նրան անթառամ պսակը, իսկ սատանան իր բոլոր դևերով հեռվում կանգնած, կրճտում էր ատամները և ողբում իր կործանումը, որ պարտվեց մի երիտասարդից: Հրեշտակների բանակը ուրախանում և զվարճանում էր Սուրբ մարտիրոսության ու նոր նահատակության համար:

Երեք տեղ փոխեցին, զուցե երկնչեր, բայց չվախեցավ: Դահիճը, վերցնելով սուրը, երեք անգամ վեր բարձրացրեց և ասաց. «Ահա գլխատում եմ քեզ, եթե դարձի չգաս»: Սուրբը ասաց. «Բազմիցս ասացի ձեզ, որ ես քրիստոնյա եմ և ձեր օրենքը չեմ ընդունում»: Ապա գլխատեց երանելի երիտասարդին:

Այդ ժամանակ երանելի Սուրբ նահատակը ավանդեց հոգին Աստծո ձեռքը. և անուշ հոտ բուրեց Սուրբ մարմնից և լցրեց ամենքի քիմքը: Քրիստոնյաներն ուրախանալով՝ փառք և գոհություն էին տալիս համբերության տվողին: Բայց Սուրբ մարմինը վերցնելու հրաման չտվեցին, այլ հրամայեցին երեք օր թողնել անթաղ. և այդպես անթաղ Սուրբ նշխարները ընկած էին փողոցում, և երկու տաճիկ գնացին լրբությամբ և ոտքով հարվածեցին երանելու գլխին և պատուհասվեցին Տիրոջից: Մեկը գնաց ծովափ, որպեսզի լվանա արյունը, որի մեջ թաթախվել էր ոտքը, այդ պահին ընկնելով խեղդվեց ջրում, իսկ մյուսի ոտքը չորանալով՝ գոսացավ (անդամալույծ դառնալ):

Գիշերը պայծառ լույս ծագեց երանելու Սուրբ նշխարների վրա, և հաջորդ օրը չէին

համարձակվում փնտրել Սուրբ մարմինը: Բայց ծնողներն ու օտար հավատարիմ պղամարդիկ մոտեցան քաղաքի բդեշխին եւ խնդրեցին երանելի երիտասարդի մարմինը: Եւ վերցնելով՝ տարան Սուրբ Հովակիմի եւ Աննայի վանքը եւ այնտեղ ամփոփեցին Սուրբ նշխարները:

Նահատակության ժամանակ պայծառ լույս իջավ Սուրբ մարմնի վրա եւ այլեւս չհեռացավ նրանից՝ մշտապես մնալով նրա վրա: Ողջ ճանապարհին գնում էր Սուրբ նշխարների վրա, մինչեւ տանելով ամփոփեցին տապանում: Թաղման ժամանակ զարմանալի նշան երեւաց երկնքում՝ արեգակի նման, քանզի լույսը երեւում էր կամարաձեւ, եւ լուսափայլ ամպեղեն խաչը եկավ Սուրբ երիտասարդի վրա: Աստծու հրեշտակները իջնելով՝ ողջագուրում էին երանելի նոր մարտիրոսի Սուրբ մարմինը: Սուրբ վկային տեսնելու համար՝ հավաքվեցին բոլոր քրիստոնյաները, քահանաները, ժողովուրդները, ֆռանկները եւ հոռոմները, անգամ հրեաներն ու այլազգիները: Բոլորը հիանում եւ փառք էին տալիս Աստծուն: Եւ բազմությանը երեւաց սքանչելի տեսիլքը, որ պատմում էին նրա մասին:

Եւ ես անպիտան Վրթանեսս՝ վարդապետների մեջ նվաստս եւ քարոզիչներից վերջինս, ականատես եղա այս ամենին եւ անմաքուր բազուկներովս գրկեցի եւ դրեցի տապանի մեջ, եւ ըստ իմ մթագնած մտքի կարողության՝ գրեցի այս պատմությունը:

Աշխարհաբարի վերածեց
Անդրանիկ սրկ. Հովհաննիսյանը